

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-3-4-Ա

ք. Երևան

28.02.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի փետրվարի 28-ի նիստում քննարկեց 2021 թվականի հունիսի 6-ին «Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության դիմումը «GRAND CANDY» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ՝ ԱԾՄԴ 30-րդ դասի «սուրճ», 35-րդ դասի «հրուշակեղենի, քաղցրավենիքի, շոկոլադի, սուրճի, պաղպաղակի, խմորեղենի վաճառք» և 43-րդ դասի «սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ» ապրանքների և ծառայությունների համար:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում կան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ «GRAND CANDY» ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.01.2020 թվականի դրությամբ լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է ապրանքային նշանը: Բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ն հանդիսանում է տվյալ ոլորտում խոշոր արտադրող, հաստատել է իր կայուն տեղը հայկական շուկայում և ունի արտադրատեսակների լայն ընտրանի: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն «GRAND CANDY» ապրանքային նշանը կարող է հանրահայտ ճանաչվել ՀՀ-ում 2020թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ԱԾՄԴ 30-րդ դասի «սուրճ», 35-րդ դասի «հրուշակեղենի, քաղցրավենիքի, շոկոլադի, սուրճի, պաղպաղակի, խմորեղենի վաճառք» և 43-րդ դասի «սրճարանների ծառայություններ» ապրանքների և ծառայությունների համար:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը «GRAND CANDY» ապրանքային նշանը 01.01.2020թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 30-րդ դասի «սուրճ», 35-րդ դասի «հրուշակեղենի, քաղցրավենիքի, շոկոլադի, սուրճի, պաղպաղակի, խմորեղենի վաճառք» և 43-րդ դասի «սրճարանների ծառայություններ» ապրանքների և ծառայությունների համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ բավարարել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ